վախճանեցաւ Փիլիպպոս Աղբակեցի, և ինք կաթողիկոս ընտրուեցաւ. «Մինչ էր նա անդ ի Ս. Նախավկայի վանքն, կ'ըսէ Զաքարիա Սարկաւագ, մեռաւ Փիլիպպոս կաթուղիկոսն ի Ս. Էջմիածին ի Ռճդ թուին։ Եւ առաքեցին սուրհանդակ, և բերել զնա՝ և օրհնեցին կաթուղիկոս ի Ծաղկաղարդի կիւրակէն» (7)։ Իր կաթողիկոսութեան առաջին տարիներուն չարունակուեցաւ կառուցումը Շամբուռորի վանքին և աւարտեցաւ 1662ին (8)։

Սիմէոն կաթողիկոս իր «Ջամբռ»ին մէջ խօսելով Յակոբ Ջուղայեցիի մասին կը գրէ. «Սա էր այր հոգեբնկալ և առաքինի, իմաստուն և հանճարեղ, հեղ և երկայնամիտ» (9)։ Զաքարիա Սարկաւագ զայն կը կոչէ. «Երանելի Հայր մեր և պատուական հայրապետ, որդի բարեպաշտի» (10)։ Առաքել Դաւրիժեցի զինք կ'անուանէ. «Մեծահոգ և երկայնամիտ Հայրապետ» (11)։ Ճանապարհորդ Շարտէն նկարագրելով իր տեսակցութիւնը Յակոբ կաթողիկոսին հետ, կ'ըսէ. «1673 Մարտ 16ին Հայաստանի պատրիարքը տեսայ... բոլո-

---

(7) Զաքարիա, Անդ 60։

(8) Առաքել Դաւրիժեցի, Անդ 267։

(9) Ջամբռ, 23։

(10) Զաքարիա, Անդ, Հաս. Բ. էջ 59։

(11) Առաքել Դաւրիժեցի, Անդ 517։